Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԲՈՒԶԱՆԴ ՓՈՂ. 3 ՏԱՐԱԾՔ 37
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1031198
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-08-06
1.5 ՀՎՀՀ-ն		02680874
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)43222109
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.armsymphony.am
1.8 Էլեկտրոնային փոստը		finance@armsymphony.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արմեն Թավադյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրաբերություններ կանոնադրական նպատակների համար	96,325,862
	Հաշվարկային հաշվում առկա մնացորդի նկատմամբ տոկոսի հաշվեգրում	77,949
	Մուտքեր տրված փոխառություններից	12,000,000

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրաբերություններ կանոնադրական նպատակների համար	5,187,686
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Նվիրաբերություն մշակութային կազմակերպություններին կանոնադրական նպատակների համար	30,246,560	
Աջակցություն կանոնադրական գործունեության շրջանակներում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտներին	380,000	
Աջակցություն կանոնադրական գործունեության շրջանակներում մշակույթի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց	5,037,500	
Հյուրախաղերի կազմակերպում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համար ԱՄՆ-ում	49,601,362	
Երաժշտական գործիքների ձեռքբերում Հայաստանի պեական սիմֆոնիկ նվագախմբի համար	15,494,652	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	138,629,313	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	100,760,074	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 21 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by ASATRYAN ASTGHIK 7907960071
Date: 2025.06.30 16:44:07 AMT

«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամ»

Ֆինանսական հաշվետվություններ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվետու կազմակերպություն 5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները 6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիրը 6
4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ 10
5. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ 10
6. Հիմնական միջոցներ 11
7. Տրված փոխառություն 11
8. Տրված կանխավճարներ 12
9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 12
10. Եկամուտներին վերաբերող շնորհներ 12
11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 12
12. Եկամուտներ շնորհներից 13
13. Տրված նվիրաբերություններ 13
14. Վարչական և այլ ծախսեր 13
15. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ 14
16. Գործարքներ կապակցված կողմերի հետ 14
17. Ֆինանսական գործիքների իրական արժեք 15
18. Ռիսկի կառավարում 15

Ernst & Young CJSC
2, Vazgen Sargsyan St.,
Kamar Business Center, 7th floor
Yerevan, 0010, Armenia
Office:+374 60 50 77 77
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0010
2, Վազգեն Սարգսյան փող.
Կամար բիզնես կենտրոն, 7-րդ հարկ
Հեռ. `+374 60 50 77 77
www.ey.com/am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամի»
Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամի» (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքները, համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և հոգաբարձուների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Հոգաբարձուների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն,
Աուդիտի բաժնի գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

2025թ. հունիսի 30

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	3,185	3,836
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**3,185**	**3,836**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		–	1,545
Տրված փոխառություն	7	–	12,000
Տրված կանխավճարներ	8	16,241	10,137
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	9,122	34,153
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**25,363**	**57,835**
Ընդամենը ակտիվներ		**28,548**	**61,671**
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	14,871	4,504
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	2,892	854
Պարտավորություններ շահութահարկի գծով		–	73
Ընդամենը պարտավորություններ		**17,763**	**5,431**
Զուտ ակտիվներ		10,785	56,240
Ընդամենը զուտ ակտիվներ		**10,785**	**56,240**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**28,548**	**61,671**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից և ստորագրվել՝

Գլխավոր տնօրեն՝ Արմեն Թավադյան

Գլխավոր հաշվապահ՝ Աննա Սահակյան

2025թ. հունիսի 30

Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2024թ.*	*2023թ.*
Եկամուտներ շնորհներից	12	94,615	165,665
Ընդամենը եկամուտ		**94,615**	**165,665**
Տրված նվիրաբերություններ	13	(76,844)	(79,366)
Վարչական և այլ ծախսեր	14	(63,248)	(37,204)
Ընդամենը ծախսեր		**(140,092)**	**(116,570)**
Գործառնական (վնաս)/շահույթ		**(45,477)**	**49,095**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ		(42)	1,526
Տոկոսային եկամուտ		78	405
(Վնաս)/շահույթ մինչև հարկումը		**(45,441)**	**51,026**
Շահութահարկի գծով ծախս		(14)	(73)
Հաշվետու տարվա (վնաս)/շահույթ		**(45,455)**	**50,953**

Կից ներկայացված 1-ից 18 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ընդամենը զուտ ակտիվներ
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,287**
Ընդամենը հաշվետու տարվա շահույթ	50,953
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**56,240**
Ընդամենը հաշվետու տարվա վնաս	(45,455)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,785**

Կից ներկայացված 1-ից 18 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2024թ.*	*2023թ.*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Եկամտային ֆոնդերի համալրում նվիրաբերություններից	11	101,514	130,818
Տրված նվիրաբերություններ	12	(55,627)	(79,366)
Աշխատակիցներին և մատակարարներին վճարված գումարներ		(73,385)	(39,643)
Վճարված հարկեր՝ բացի շահութահարկից		(9,512)	(6,870)
Գործառնական (գործունեությունում օգտագործված) /գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի վճարումը		**(37,010)**	**4,939**
Վճարված շահութահարկ		(87)	(515)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր		**(37,097)**	**4,424**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Տրամադրված փոխառություն	7	12,000	(12,000)
Ստացված տոկոսներ		78	405
Հիմնական միջոցների ձեռքբերում		–	(535)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված/(օգտագործված) ներդրումային գործունեությունում		**12,078**	**(12,130)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(19)	1,759
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		7	–
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(25,031)**	**(5,947)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		34,153	40,100
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	9	**9,122**	**34,153**

Կից ներկայացված 1-ից 18 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:

(հազար ՀՀ դրամ)

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամ»-ը (այսուհետ՝ «Հիմնադրամ») հիմնադրվել է 2018թ. հուլիսի 26-ին՝ որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Հիմնադրամը ստեղծվել է՝ նպաստելու Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գործունեության զարգացմանը, պահպանմանը և բարձրացնելու հանրային իրազեկությունը Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

Հիմնադրամի հիմնադիրներն են Սերգեյ Սմբատյանը և Աննա Տեր-Հովակիմյանը:

Հիմնադրամը գտնվում է ՀՀ, ք. Երևան, 0010, Բուզանդ փողոց, շենք 3, տարածք 37 հասցեում:

2024թ. դեկտեմբերի 31-ի Հոգաբարձուների Խորհուրդը բաղկացած է 5 անդամից (2023թ. դեկտեմբերի 31՝ 5 անդամ): Հոգաբարձուների Խորհրդին կից գործում են Պատվավոր խորհուրդը, ինչպես նաև Գեղարվեստական խորհուրդը:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունեցել է 4 աշխատող (2023 թ. դեկտեմբերի 31՝ 5 աշխատող):

Հիմնադրամի հիմնական նպատակները հետևյալն են՝

- Նպաստել հայ մշակույթի, երաժշտության, գիտության և կրթության զարգացմանը Հայաստանում և նրա սահմաններից դուրս:
- Նյութական օժանդակությամբ նպաստել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի՝ միջազգային տարբեր երաժշտական փառատոներին, միջոցառումներին, երաժշտական ծրագրերին մասնակցության ապահովմանը:
- Նպաստել Հայաստանի և սփյուռքի հայ մշակութային և կրթական կազմակերպությունների և անհատների միջև կապերի հաստատմանը և համագործակցությանը, հայ մշակույթի ներուժի համախմբմանը:

(բ) Գործարար միջավայրը Հայաստանում

Հայաստանը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իր իրավական, հարկային և կարգավորվող դաշտերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից ու զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից:

Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանը և Ուկրաինան Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներից են: Ակնկալվում է, որ պատերազմը նշանակալի ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա:

Պատերազմի արդյունքում տեղի է ունեցել ոչ ռեզիդենտների (հատկապես Ռուսաստանից) ներհոսք Հայաստան, ինչը նպաստել է Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից դրամական հոսքերի ծավալի զգալի ավելացմանը և պլաստիկ քարտերով գործառնությունների ակտիվացմանը, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա, ինչի արդյունքում ընդհանուր առմամբ գրանցվել է երկնիշ աճ և գնաճի բարձր մակարդակ: Հիմնադրամի ղեկավարությունը հետևում է տնտեսական ընթացիկ իրավիճակին: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել վերջնական ազդեցությունը, որը կարող է այն ունենալ Հիմնադրամի գործունեության վրա, քանի որ ընդհանուր տնտեսության վրա դրա ազդեցության աստիճանի վերաբերյալ առկա է անորոշություն:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(հազար ՀՀ դրամ)

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն («ՖՀՄՍ»):

Հիմնադրամը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ որոշ հիմնական միջոցների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով («ՀՀ դրամ»), և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ավանդադրված միջոցները դասակարգվում են որպես «դրամական միջոցներ և դրանց համարժեքներ», եթե նրանց պայմանագրային ժամկետը մինչև 90 օր է:

Կանխավճարներ

Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման կորստի գծով պահուստը: Կանխավճարը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ, երբ դրա հետ կապված ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում են ձեռք բերվել մեկ տարուց հետո, կամ երբ այն վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման պահին կդասակարգվեր որպես ոչ ընթացիկ:

Ակտիվների ձեռքբերման համար տրված կանխավճարները տեղափոխվում են ակտիվի հաշվեկշռային արժեք, երբ Հիմնադրամը ակտիվի նկատմամաբ ձեռք է բերում վերահսկողություն, և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ: Այլ կանխավճարները ծախսագրվում են ֆինանսական արդյունքներում, երբ ստացվում են դրանց հետ կապված ապրանքներն ու ծառայությունները: Եթե առկա է որևէ հայտանիշ, որ կանխավճարի հետ կապված ակտիվները, ապրանքներն ու ծառայությունները չեն ստացվելու, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համարժեք կերպով նվազեցվում է, և համապատասխան արժեզրկումից կորուստը ճանաչվում է տվյալ տարվա ֆինանսական արդյունքներում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներն արտացոլվում են սկզբնական արժեքով՝ առանց ընթացիկ սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածություն ու արժեզրկումից կուտակված կորուստները: Արժեքը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ հանգամանքների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են ակտիվի հաշվեկշռային արժեքի հնարավոր չվերականգնման վերաբերյալ:

Երաժշտական գործիքները արտացոլվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է՝ միաժամանակ նվազեցվելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ստացված գումարը վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների կազմում, եթե այն տվյալ ակտիվի արժեքի նախորդ նվազման վերականգնում չէ, որը նախկինում արտացոլվել էր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այս դեպքում ակտիվի արժեքի աճը վերագրվում է ֆինանսական արդյունքներին: Վերագնահատումից արժեքի նվազումը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ նախկինում հիմնական միջոցների վերագնահատման պահուստում արտացոլված նույն ակտիվի գծով արժեքի աճի հաշվին այդպիսի նվազեցման անմիջական հաշվանցմանը:

Ակտիվի օտարման դեպքում վերագնահատման պահուստում ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար դառնում է հասանելի: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով՝ ակտիվի ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

Հոդված	*Օգտակար ծառայության ժամկետ*
Մեքենաներ և սարքավորումներ	1-5 տարի
Գրասենյակային գույք	5 տարի
Երաժշտական գործիքներ	8 տարի

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները անհրաժեշտության դեպքում վերանայվում և փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Վերանորոգումների և սպասարկման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերում, բացառությամբ, եթե դրանք բավարարում են կապիտալացման չափանիշներին:

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ այն օտարվում է կամ ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում վերջինիս օգտագործումից կամ օտարումից: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը (որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն) պետք է ներառվի շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ միավորն ապաճանաչվում է:

Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Հիմնադրամն ունի այնպիսի ֆինանսական ակտիվներ, ինչպիսիք են դրամական միջոցներն ու դրանց համարժեքները և տրամադրված փոխառությունը:

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- Ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է:
- Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման պայմանավորվածության համաձայն, ինչպես նաև:
- Հիմնադրամը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Այն դեպքում, երբ Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Հիմնադրամի շարունակվող մասնակցությանը համարժեք: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Հիմնադրամից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ պարտքային գործիքները սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: Դասակարգումը հիմնված է հետևյալ երկու չափանիշների վրա. Հիմնադրամի ակտիվների կառավարման բիզնես մոդելի և արդյոք գործիքի գծով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բավարարում են «բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման» չափանիշին: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Հիմնադրամից ճանաչել ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստ բոլոր այն պարտքային գործիքների համար, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով:

Հիմնադրամը բանկերում բացված հաշիվների համար պահուստի գումարը հաշվարկում է՝ ելնելով գործընկեր բանկի երկարաժամկետ վարկային ռեյտինգից:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, և չեն դասակարգվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հիմնադրամի հիմնական ֆինանսական պարտավորությունները բաղկացած են կրեդիտորական պարտքերից:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Եկամուտներ

Եկամուտներին վերաբերող շնորհներն ստացվում են հատուկ նպատակով նվիրաբերություններից և հասանելի չեն Հիմնադրամի ընդհանուր օգտագործման համար: Այս ֆոնդերը սկզբնապես ձևակերպվում են որպես պարտավորություններ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես եկամուտ այնքան ժամանակ, որքան Հիմնադրամը կատարում է եկամուտներին վերաբերող շնորհների գծով նվիրաբերությունների պայմանագրերով նախատեսված պարտավորությունները: Որպես կանոն՝ նման նվիրաբերություններից եկամուտները ճանաչվում են պարտավորությունները կատարելիս դրանց հետ կապված ծախսերի առաջացմանը զուգընթաց: Եկամտի անսահմանափակ օգտագործման ֆոնդերը հասանելի են նվիրաբերությունների ընդհանուր նպատակների համար, ինչպես նշված է Հիմնադրամի կառավարչական փաստաթղթերում: Այդ իսկ պատճառով, եկամտի անսահմանափակ օգտագործման ֆոնդերի գծով նվիրաբերությունները ճանաչվում են որպես եկամուտ, երբ կան բավարար ապացույցներ, որ ստացվել և կատարվել է նվիրաբերությունը կատարելու խոստումը:

Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները չեն բաշխվում հիմնադիրների միջև ո՛չ սովորական գործունեության ընթացքում, և ոչ էլ՝ լուծարման ժամանակ:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտները ճանաչվում են այն ժամանակ, երբ տոկոսները հաշվեգրվում են օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, որն ակնկալվող ապագա դրամական մուտքերը զեղչում է ֆինանսական գործիքի ակնկալվող օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ֆինանսական ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Ծախսեր

Վճարները, միջնորդավճարները և այլ ծախսերը սովորաբար ճանաչվում են հաշվեգրման եղանակով, երբ ծառայությունը համարվում է մատուցված:

Տրված նվիրաբերություններ

Հիմնադրամը նվիրաբերություններ է կատարում ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց՝ նվիրաբերության պայմանագրերի հիման վրա՝ բանկային փոխանցումների միջոցով: Նվիրաբերության ծախսերը ճանաչվում են նվիրաբերության գումարի փոխանցման պահին:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատավարձերը, ՀՀ Պետական բյուջե հատկացումները, վճարովի տարեկան արձակուրդը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդը, պարգևավճարները և այլ ոչ դրամական հատուցումները (ինչպիսիք են, օրինակ, առողջապահական ծառայությունները) հաշվեգրվում են Հիմնադրամի աշխատակիցների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման տարում: Աշխատակիցները ստանում են կենսաթոշակներ ՀՀ Պետական կենսաթոշակային հիմնադրամից՝ օրենքներին և կարգավորումներին համապատասխան: ՀՀ Պետական կենսաթոշակային հիմնադրամին հատկացումները կատարվում են Հիմնադրամի կողմից տվյալ տարվա ընթացքում ուժի մեջ գտնվող պարտադիր դրույքաչափերին համապատասխան: Այսպիսի հատկացումները ծախսագրվում են, երբ կատարվում են:

Արտարժութային գործառնություններ

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայկական դրամով, որը Հիմնադրամի գործառնական և ներկայացման արժույթն է: Արտարժույթով գործարքները սկզբնապես հաշվառվում են գործարքի կատարման ամսաթվի դրությամբ առկա գործառնական արժույթի փոխարժեքով: Արտարժույթով սահմանված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործառնական արժույթի փոխանակման փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով, արտարժույթով վերահաշվարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

2024 թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 396.56 ՀՀ դրամ (2023թ.՝ 404.79 ՀՀ դրամ), 1 եվրոյի համար՝ 413.89 ՀՀ դրամ (2023թ.՝ 447.90 ՀՀ դրամ), իսկ 1 ֆունտ ստերլինգի համար 499.27 ՀՀ դրամ՝ (2023թ.՝ 515.38 ՀՀ դրամ):

Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Հիմնադրամն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար (եթե այլ բան նշված չէ):

- ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներում,
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ,
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում:

Այս փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

(հազար ՀՀ դրամ)

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Հիմնադրամը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

- ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ - Փոխանակելիության բացակայություն,
- ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում,
- ՖՀՄՍ 19 Դուստր կազմակերպություններ՝ առանց հրապարակային հաշվետվողականության: Բացահայտումներ,
- Փոփոխություններ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում – Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում,
- Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր – Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում և ՖՀՄՍ 7-ում,
- ՖՀՄՍ տարեկան բարելավումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 10, ՀՀՄՍ 7):

Այս փոփոխությունները (բացառությամբ ՖՀՄՍ 18-ի) էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում

2024 թվականի ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 *Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում* ստանդարտին: ՖՀՄՍ 18-ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ: Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել՝ ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Այն նաև պահանջում է նոր, ղեկավարության կողմից սահմանած կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ծանոթագրությունների «դերերի» վրա:

Բացի այդ, ՀՀՄՍ 7 *Դրամական հոսքերի մասին հաշվետվություն* ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում

ՖՀՄՍ 18 ստանդարտը և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: ՖՀՄՍ 18-ը կիրառվելու է հետընթաց:

Ներկայումս Հիմնադրամն աշխատում է բացահայտել այն բոլոր փոփոխությունները, որոնք ազդեցություն կունենան հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

5. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

Հիմնադրամի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է գնահատումներ և դատողություններ՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տվյալների որոշման համար: Առավել էական ազդեցություն ունեցող գնահատումները և դատողությունները հետևյալն են.

(հազար ՀՀ դրամ)

5. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնադրամը գնահատում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետներն առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին: Եթե սպասելիքները տարբերվում են նախորդ գնահատումներից, փոփոխությունները հաշվառվում են որպես փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում՝ համաձայն ՀՀՄՍ 8՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* ստանդարտի: Այս գնահատումները կարող են ունենալ նշանակալի ազդեցություն հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքների վրա:

6. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները և դրանց գծով կուտակված մաշվածությունը բաղկացած են հետևյալ հոդվածներից.

	Մեքենաներ և սարքավորումներ	*Գրասենյակային գույք*	*Երաժշտական գործիքներ*	*Ընդամենը*
Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,983**	**119**	**3,517**	**6,619**
Ավելացումներ	–	–	1,070	**1,070**
Ներքին շարժ	(386)		386	–
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,597**	**119**	**4,973**	**7,689**
Ավելացումներ	–	–	–	–
Մնացորդ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,597**	**119**	**4,973**	**7,689**
Կուտակված մաշվածություն				
Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,671**	**74**	**402**	**3,147**
Մաշվածության գծով ծախս	–	23	683	**706**
Ներքին շարժ	(74)	–	74	–
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,597**	**97**	**1,159**	**3,853**
Մաշվածության գծով ծախս	–	22	629	**651**
Մնացորդ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,597**	**119**	**1,788**	**4,504**
Հաշվեկշռային արժեք				
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**22**	**3,814**	**3,836**
Մնացորդ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**–**	**3,185**	**3,185**

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 2,716 հազար ՀՀ դրամ (2023 թ. դեկտեմբերի 31՝ 2,597 հազար ՀՀ դրամ):

7. Տրված փոխառություն

2023թ. հունիսին Հիմնադրամը տրամադրել է կարճաժամկետ անտոկոս փոխառություն «Արամ Խաչատուրյան» մշակութային հիմնադրամին 12,000 հազար ՀՀ դրամի չափով: Փոխառության հաշվեկշռային արժեքը մոտավորապես համասար է դրանց հաշվեկշռային արժեքին՝ պայմանավորված իր կարճ ժամկետայնությամբ:

2024թ. սկզբին փոխառությունը լրիվ մարվել է:

(հազար ՀՀ դրամ)

8. Տրված կանխավճարներ

Տրված կանխավճարները ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ. դեկտեմբերի 31	*2023թ. դեկտեմբերի 31*
Նվիրաբերություններ անելու նպակատով	15,495	9,500
Շահութահարկի գծով	623	637
Աշխատավարձի գծով	123	–
Ընդամենը տրված կանխավճարներ	**16,241**	**10,137**

9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են հետևյալ հոդվածները.

	Արժույթ	*2024թ. դեկտեմբերի 31*	*2023թ. դեկտեմբերի 31*
Ընթացիկ հաշիվներ բանկերում	ՀՀ դրամ	8,513	4,408
Ընթացիկ հաշիվներ բանկերում	ԱՄՆ դոլար	609	17,005
Ընթացիկ հաշիվներ բանկերում	Ֆունտ ստերլինգ	–	12,740
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		**9,122**	**34,153**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դրամական միջոցները տեղաբաշխված են մեկ հայկական բանկում (2023թ. դեկտեմբերի 31՝ մեկ հայկական բանկում): 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ բանկն ունի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long−term Issuer Default Rating (IDR)) 'B+' վարկանիշ՝ Դրական հեռանկարով և 'B+' Կենսունակության վարկանիշ (Viability Rating (VR))՝ Fitch Ratings միջազգային վարկանիշային ընկերությունից: Դրամական միջոցների և դրանց համարժեքների բոլոր մնացորդները տեղակայված են Փուլ 1-ում:

10. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Եկամուտներին վերաբերող շնորհներն ստացվում են հատուկ նպատակով նվիրաբերություններից և մատչելի չեն Հիմնադրամի ընդհանուր օգտագործման համար: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ եկամուտներին վերաբերող շնորհների մնացորդը, որը կօգտագործվի նախապես որոշված նպատակներով, կազմում է 14,871 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31՝ 4,504 հազար ՀՀ դրամ):

Անսահմանափակ օգտագործման ֆոնդերը հասանելի են նվիրաբերությունների ընդհանուր նպատակների համար, ինչպես նշված է Հիմնադրամի կառավարչական փաստաթղթերում: Անսահմանափակ օգտագործման ֆոնդերի գծով Հիմնադրամը պարտավորություն չի ձևավորել և այդ ֆոնդերի գծով ստացված նվիրաբերությունները ճանաչել է եկամուտ՝ Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (Ծանոթագրություն 12):

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ. դեկտեմբերի 31	*2023թ. դեկտեմբերի 31*
Եկամտային հարկ և այլ պարտադիր վճարներ	2,048	513
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	460	266
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	384	75
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**2,892**	**854**

(հազար ՀՀ դրամ)

12. Եկամուտներ շնորհներից

Նվիրաբերություններից ստացված միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ.	*2023թ.*
Կազմակերպություններից ստացված նվիրաբերություններ	96,326	110,683
Անհատներից ստացված նվիրաբերություններ	8,657	20,135
Ընդամենը եկամուտներ ստացված նվիրաբերություններից	**104,983**	**130,818**

2024թ. համար ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված 94,615 հազար ՀՀ դրամի (2023թ.՝ 165,665 հազար ՀՀ դրամ) ստացված նվիրաբերություններից եկամուտները ներառում են հաշվետու ժամանակաշրջանում՝ ընդհանուր նպատակներով ստացված 32,656 հազ. ՀՀ դրամի գումարը (2023թ .՝ 123,314 հազար ՀՀ դրամ), հատուկ նպատակներով ստացված 57,454 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 3,000 հազար ՀՀ դրամ), ինչպես նաև անցյալ տարի՝ հատուկ նպատակներով ստացված 4,504 հազ. ՀՀ դրամը (2023թ.՝ 39,351 հազար ՀՀ դրամ):

13. Տրված նվիրաբերություններ

Տրված նվիրաբերությունները ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ.	*2023թ.*
Կազմակերպություններին տրված նվիրաբերություններ	76,464	51,556
Անհատներին տրված նվիրաբերություններ	380	27,810
Ընդամենը տրված նվիրաբերություններ	**76,844**	**79,366**

14. Վարչական և այլ ծախսեր

Վարչական և այլ ծախսերը ընդգրկում են Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ծախսերը և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարած ծախսերի փոխհատուցումները:

Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ծախսերը ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ.	*2023թ.*
Անձնակազմի գծով ծախսեր	27,722	20,943
Համերգի կազմակերպման հետ կապված ծախսեր	13,423	–
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	11,178	3,753
Մատուցված աջակցությունների գծով ծախսեր	5,038	–
Մասնագիտական ծառայություններ	1,422	5,556
Բանկի և ապահովագրության գծով ծախսեր	818	436
Մաշվածություն	651	706
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	309	535
Չփոխհատուցվող հարկեր և այլ ծախսեր	283	1,352
Վերապատրաստում	7	3,184
	60,851	**36,465**

Հիմնադրամի կողմից Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարած ծախսերի փոխհատուցումները ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ.	*2023թ.*
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,921	595
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	–	9
Այլ ծախսեր	476	135
Ընդամենը վարչական և այլ ծախսեր	**63,248**	**37,204**

(հազար ՀՀ դրամ)

15. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ

Հիմնադրամի գործառնական միջավայրը

Իրավական միջավայր

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամը դատական գործընթացների կամ վեճերի մեջ չի ներգրավվել: 2024 և 2023 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դեմ առկա դատական հայցեր չկան:

16. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հիմնադրամի հիմնադիրները բացահայտված են Ծանոթագրություն 1-ում: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը տիրապետում է կապակցված կողմերի հետ գործարքների որոշման և պատշաճ կերպով բացահայտման համապատասխան գործընթացների:

Հիմնադրամը կապակցված կողմերի հետ կատարում է այնպիսի գործարքներ, որոնք համարժեք են անկախ կողմերի հետ գործարքներին:

Ստորև ներկայացված են 2024թ. և 2023թ. համար կապակցված կողմերի հետ գործարքների ծավալը, եկամուտներն ու ծախսերը:

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	***2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***
Գործարքներ		
Կառավարչական առանցքային անձնակազմ		
Աշխատավարձ	12,884	11,335
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	11,178	–
Վերապատրաստում	–	3,184
Համատեղ հսկողություն ունեցող կազմակերպություն		
Տրամադրված փոխառություն*	–	12,000
Տրամադրված նվիրատվություն	3,000	9,000
Հոգաբարձուների խորհուրդ		
Եկամուտներ ստացված նվիրաբերություններից	3,469	–
Տրված նվիրաբերություններ	3,469	–

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	***2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ***
Մնացորդներ		
Համատեղ հսկողություն ունեցող կազմակերպության		
Տրամադրված փոխառություն*	–	12,000

* *Փոխառությունը լրիվ մարվել է 2024թ. սկզբին:*

(հազար ՀՀ դրամ)

17. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, տրված փոխառությունների և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքները մոտավորապես համասար են դրանց հաշվեկշռային արժեքներին՝ պայմանավորված իրենց կարճ ժամկետայնությամբ:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրական արժեքով.

	Ընդամենը	*Մակարդակ 2*	*Մակարդակ 3*
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**9,122**	9,122	–
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**2,892**	–	2,892
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**34,153**	34,153	–
Տրված փոխառություն	**12,000**	–	12,000
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**854**	–	854

18. Ռիսկի կառավարում

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները կազմված են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, տրված փոխառություններից, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերից: Այս ֆինանսական գործիքների հիմնական նպատակը Հիմնադրամի բարեգործական գործունեությունում կիրառումն է:

Հիմնական ռիսկերը, կապված Հիմնադրամի ֆինանսական գործիքների հետ, հանդիսանում են տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի փոխարժեքի տատանման ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

Տոկոսադրույքի ռիսկ

Հիմնադրամի եկամուտները և գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը անկախ են շուկայական տոկոսադրույքի փոփոխություններից:

(հազար ՀՀ դրամ)

18. Ռիսկի կառավարում (շարունակություն)

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը ստանում է արտարժույթով արտահայտված զգալի նվիրաբերություններ իր նվիրատուներից և, հետևաբար, այս տեսանկյունից ենթակա է արտարժութային ռիսկի: 2024թ. հունվարի 1-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Հիմնադրամն իրականացրել է զգալի արժութային գործարքներ՝ ծառայությունների-վճարումների հետ կապված:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Հիմնադրամի եկամտի զգայունությունը փոխարժեքների հնարավոր ողջամիտ տատանումների նկատմամբ՝ ենթադրելով, որ բոլոր այլ փոփոխականները մնում են հաստատուն (պայմանավորված դրամային ակտիվներիիրական արժեքների փոփոխությունների հետ):

Հիմնադրամն ունի արտարժութային դիրքեր դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով:

	Փոխարժեքի փոփոխություն (%)	***Եկամտի վրա ազդեցություն***
2024թ.		
ԱՄՆ դոլար	-3.84	21
Ֆունտ ստերլինգ	-2.40	–
ԱՄՆ դոլար	+3.40	(23)
Ֆունտ ստերլինգ	+8.63	–

	Փոխարժեքի փոփոխություն (%)	***Եկամտի վրա ազդեցություն***
2023թ.		
ԱՄՆ դոլար	-10	1,700
Ֆունտ ստերլինգ	-10	1,274
ԱՄՆ դոլար	+10	(1,700)
Ֆունտ ստերլինգ	+10	(1,274)

Հիմնադրամը չունի որևէ համաձայնություն իր գործունեության ընթացքում արտարժութային ռիսկերը մեղմացնելու համար և ենթակա է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ռիսկին՝ բաց արժութային դիրքի չափով:

Պարտքային ռիսկ

Հիմնադրամը համագործակցում է միայն ճանաչված և վճարունակ երրորդ կողմերի հետ:

Հիմնադրամի՝ պարտքային ռիսկին հակվածության վրա ազդում է գործընկերոջ հնարավոր անվճարունակությունը, որի առավելագույն գումարը հավասար է համապատասխան ֆինանսական գործիքի հաշվեկշռային արժեքին:

Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է շարունակական վերահսկողություն վնասներ կրելու ռիսկի ուղղությամբ, որն առաջանում է իրացվելի ակտիվների բացակայության պատճառով ֆինանսական պարտավորություններն ամբողջությամբ կատարելու անկարողությունից: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետը մեկ ամսից պակաս է:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 16:37